


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2001թ. հունվար-մայիս		% -ներով՝ ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	%-ով 2000թ հունվար-մայիսի նկատմամբ	2001թ. հունվար-մայիս	2000թ. հունվար-մայիս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում.	215777.1	109.9	100.0	100.0
մանրածախ ապրանքաշրջանառություն	149312.8	113.8	69.2	66.7
բնակչությանը մատուցված ծառայություններ	66464.3	103.0	30.8	33.3

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(%-ներով՝ ընդհանուրի նկատմամբ)**



2001թ. հունվար-մայիսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով՝ 9.9%) և դրանում 2.5 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2001թ. մայիսին սպառողական շուկայի ծավալը 2001թ. ապրիլի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 6.6 %-ով:

Մանրածախ առևտուր


2001թ. հունվար-մայիսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է մոտ 149.3 մլրդ. դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.8%-ով (2001թ. մայիսին ապրիլի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, աճել է 12.8%-ով) :

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2001թ. հունվար – մայիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը %-ներով ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	149312.8	100.0
այդ թվում.		
խանութներ	75140.4	50.3
հանրային սննդի օբյեկտներ	1843.3	1.2
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	34794.3	23.3
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	8374.7	5.6
կրպակներ	29160.1	19.6

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2001թ. հունվար – մայիսին

(%-ներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-մայիսին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 93.2% (139094.8 մլն. դրամ), իսկ 6.8 % (10218.0 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:


Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2001թ. հունվար-մայիսին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 34794.3 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի 2001թ. հունվար – մայիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	ընդհանուրի նկատմամբ	
		այդ թվում %-ներով՝ պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արագածոտն	-	-	-
Արարատ	199.5	7.6	92.4
Արմավիր	375.6	57.8	42.2
Գեղարքունիք	482.8	17.6	82.4
Լոռի	840.2	39.2	60.8
Կոտայք	674.1	45.5	54.5
Շիրակ	635.8	8.8	91.2
Սյունիք	15.0	-	100.0
Վայոց Ձոր	-	-	-
Տավուշ	952.7	64.3	35.7
ք. Երևան	30618.6	14.6	85.4
Ընդամենը հանրապետությունում	34794.3	17.5	82.5

Հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2001թ. հունվար-մայիսին կազմել է 82.5%, իսկ պարենային ապրանքներինը՝ 17.5%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)
(%-ներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-մայիսին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 2.1 տոկոսային կետով:

2001թ. հունիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 25693.7 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 56 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-մայիսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 5.6% կամ 8374.7¹ մլն. դրամը:


¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում ըստ արտադրական և սպասարկման ոլորտի առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է մոտ 66.5 մլրդ.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 3.0%-ով (իսկ 2001թ. մայիսին 2001թ. ապրիլ ամսվա համեմատ ծառայությունների ծավալը, համադրելի գներով, կազմել է 94.3%): Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 797.6 մլն.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի համեմատ, համադրելի գներով, կազմել է 79.6%: 2001թ. հունվար-մայիսին 2000թ. հունվար-մայիսի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ, որը հիմնականում պայմանավորվել է օդային տրանսպորտի(9.3%), կենցաղային (5.4%), մշակույթի(3.5%), իրավական և բանկային(4.0%), տուրիստական-էքսկուրսիոն(3.1%), կրթության(2.4%), կապի(2.0%), առողջարանների և հանգստյան տների (0.2%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ նկատվել է բժշկական ծառայությունների սակագների նվազում 0.3%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների, 2001թ. հունվար-մայիսին

(%-ներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-մայիսին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակկոմունալ ծառայությունները՝ 32.2%, այդ թվում՝ բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը կազմել է 22.9%, մարդատար տրանսպորտի ծառայությունները՝ 30.1%, այդ թվում՝ օդային տրանսպորտի բաժինը կազմել է 25.3%:

2001թ. հունվար-մայիսին, ըստ 28 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալների, ծառայությունների ծավալը կազմել է 350.8 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.5%-ը: